



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 105**

**<<ՕԱԶԻՍ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԴՅՈՒՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով, ինչպես նա հիմք ընդունելով <<Օազիս Ֆուդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ որոշում եմ.

1. Թույլատրել <<Օազիս Ֆուդ>> ՍՊԸ-ին տրամադրել Վերին Պտղնի, Սևան-Երևան մայրուղի թիվ 12/3 հասցեում տեղադրել 4.4 քմ մակերեսով գովազդային վահանակ 2019 թվականի հունիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Արտաքին գովազդի համար տուրքը հաշվարկել և վճարել համաձայն ավագանու կողմից հաստատված դրույքաչափի՝ 1քմ-ի համար 1500 ՀՀ դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
11 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 106**

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 37-րդ հոդվածի պահանջների. **որոշում եմ.**

1. Վերին Պտղնի համայնքում, Երևան-Սևան մայրուղի թիվ 2/15 հասցեյում գտնվող «Մուշեղ Գրիգորյան» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնական շինություններ, հենապատ և պարիսպ կառուցելու համար վերջինիս նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով, որը պետք է վճարվի 900105231105 հաշվեհամարին :
2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 Էլ. փոստ

verinptghni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ
11 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 107**

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Ինքնակամ կառույցների օրինականացման տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 17-րդ, 8,1 և 18-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ կետերով, «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական ու արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1267252 վկայականը, «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից կազմած հատակագծերը, համայնքի ղեկավարին հասցեագրված հողամասի սեփականատեր՝ «Մուշեղ Գրիգորյան» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանի դիմումը՝ Վերին Պտղնի համայնքում Երևան-Սևան մայրուղի թիվ 2/15 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված՝ արտաքին չափերով 1000.3քմ շինությունների, 6.0 քմ հենապատի, 7.6 քմ պարսպի, ինքնակամ բացված 2 դռան, 5 լուսամուտի ինչպես նաև հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցների և բացված դռների ու պատուհանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ.**

1. «Մուշեղ Գրիգորյան» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի Երևան-Սևան մայրուղի թիվ 2/15 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված՝ արտաքին չափերով 1000.3քմ շինությունները, 6.0 քմ հենապատը, 7.6 քմ պարիսպը, ինչպես նաև ինքնակամ բացված 2 դռները, 5 լուսամուտները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականտերը.

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված վերը նշված շինությունների, հենապատի և պարիսպի 1 քմ-ի համար 5200 (հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ինքնական բացված դռների և լուսամուտների մեկ միավորի արժեքը 5200 (հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (տարածազնահատման 7-րդ գոտու գնահատմամբ կիրառված գործակիցը 0.26), ընդհանուր հաշվով 5 308 680 (հինգ միլիոն երեք հարյուր ութ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ օրինականացման վճար՝ որից.

ա) 1000.3քմ շինությունների համար 5 201 560 (հինգ միլիոն երկու հարյուր մեկ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

բ) 6.0 քմ հենապատի համար 31200 (երեսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

գ) 7.6 քմ պարիսպի համար 39 520 (երեսունինն հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ ,

դ) ինքնական բացված 2 դռների և 5 լուսամուտների համար՝ 36 400 (երեսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման , սակայն ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՎԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 108

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 4-Ա որոշումը, կազմված հողամասի գլխավոր հատակագիծը, ինչպես նաև Հայկ Արուճյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայկ Արուճյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 25 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.0712 հա հողամասից 0.027168 հա հատվածի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
13 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 109**

**ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Սուսաննա Պողոսյանի դիմումը՝ որոշում եմ

1. Սուսաննա Պողոսյանին տալ իրեն պատկանող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքում ջրավազանի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :
2. Հանձնարարել Սուսաննա Պողոսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:
3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ. հունիսի 13
գ. Վերին Պտղնի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 110**

**ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ
ՀԱՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև Բարիս Նիկողոսյանի ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել Բարիս Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 7 հասցեում գտնվող 552 քմ բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասը և դրա վրա գտնվող շինությունները բաժանել 2 մասի՝ S1= 358քմ և S2= 194քմ:

2. Հողամասի S1= 358քմ հատվածին և դրա վրա գտնվող շինություններին հասցեն թողնել՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 7, իսկ S2=194քմ հատվածի հողամասին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 7/1:

3. Սույն որոշումն ուժի մեջ է գտնվում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ. հունիսի 14
գ. Վերին Պտղնի